ABB
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ
ARMBUSINESSBANK

Պահանջվող փաստաթղթերի ցանկ

Մրցույթի համար պահանջվող փաստաթղթերի ցանկ ներկա պահին Բանկի հետ չհամագործակցող անկախ գնահատող ընկերությունների համար

1. Դիմում-հայտ.
2. Կանոնադրություն՝ լրացումներով և փոփոխություններով (կրկնօրինակ).
3. Պետական ռեգիստրի գրանցման վկայականը՝ իր ներդիրներով, ներառյալ՝ տնօրենի վերաբերյալ տեղեկատվության ներդիրը (կրկնօրինակ).
4. ՀՎՀՀ (կրկնօրինակ).
5. Էլեկտրոնային եղանակով Հարկային մարմնին ներկայացված վերջին մեկ տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցումները կամ այլ եղանակով Հարկային մարմնի կողմից հաստատված հաշվետվությունները.
6. Նախորդ 1 (մեկ) տարվա ընթացքում գույքի գնահատման (վերագնահատման) կատարված աշխատանքների ցանկ.
7. Իրացվելիության գործակիցների գործածման սանդղակ՝ գույքի տեսակից, արժեքից ու գտնվելու վայրից կախված.
8. Վերջին հաշվետու ամսվա դրությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք.
9. Գնահատման տիպային պայմանագրերի և գնահատման եզրակացությունների օրինակներ.
10. Ընկերության մասնաճյուղերի ցանկ.
11. Տեղեկանք այլ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ.
12. Մատուցվող ծառայությունների և սպասարկման սակագների ցանկ.
13. Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության:

Մրցույթի համար պահանջվող փաստաթղթերի ցանկ Բանկի հետ արդեն իսկ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների համար

1. Դիմում-հայտ.
2. *Կանոնադրություն՝ լրացումներով և փոփոխություններով (կրկնօրինակ).
3. *Պետական ռեգիստրի գրանցման վկայականը՝ իր ներդիրներով, ներառյալ՝ տնօրենի վերաբերյալ տեղեկատվության ներդիրը (կրկնօրինակ).
4. Էլեկտրոնային եղանակով Հարկային մարմնին ներկայացված վերջին մեկ տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցումները կամ այլ եղանակով Հարկային մարմնի կողմից հաստատված հաշվետվությունները.

5. Վերջին հաշվետու ամսվա դրությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք.

Բանկի հետ արդեն իսկ համագործակցող անկախ գնահատող ընկերությունները նշված փաստաթղթերը ներկայացնում են, եթե նախորդ մրցույթին ներկայացրած փաստաթղթերի համեմատությամբ առկա են փոփոխություններ, հակառակ դեպքում ներկայացնում են տեղեկանք՝ նշված փաստաթղթերում փոփոխությունների բացակայության վերաբերյալ:

Մրցույթին մասնակցող անկախ գնահատող ընկերությունների համար սահմանված չափանիշներ

1) ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անվանացանկում անկախ գնահատող ընկերության անվանման առկայություն (ՀՀ տարածքում գնահատման գործունեություն իրականացնող ընկերությունների համար).
2) ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության կողմից հրապարակված անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների անվանացանկում անկախ գնահատող ընկերության անվանման առկայություն (ԱՀ տարածքում գնահատման գործունեություն իրականացնող ընկերությունների համար).
3) Գնահատման գործունեության իրականացման առնվազն 3 (Երեք) տարվա փորձ.
4) Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունները չպետք է լինեն միմյանց, ինչպես նաև Բանկի կամ Բանկի ղեկավարության հետ փոխկապակցված.
5) Անկախ գնահատող ընկերությունը և/կամ նրա հետ փոխկապակցված անձը պետք է պատրաստակամ լինի համագործակցության ողջ ժամանակահատվածի ընթացքում Բանկում ներդնել սահմանված գումարի չափով ժամկետային ավանդ (նման պահանջի դեպքում, ավանդը դիտարկվում է որպես համագործակցության ապահովության միջոց):
6) Բանկերի կամ այլ ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության փորձ.
7) Բանկի կողմից գրավ ընդունվող գույքի գնահատման վճարների ընդունման նպատակով Բանկում անկախ գնահատող ընկերության կողմից առանձին հաշվի բացում: